«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի
**EduArmenia** կրթական նախաձեռնություն

# Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

## Հետազոտական աշխատանք

**Թեմա՝ ԻՆՉՊԵՍ ԶԱՐԳԱՑՆԵԼ** ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

**Հետազոտող ուսուցիչ՝ ՍՐԲՈՒՀԻ ՆԱՎՈՅԱՆ**
(Հրազդան քաղաքի համար 2 հիմնական դպրոց)

**ԿՈՏԱՅՔ 2023թ.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------------------------------------------------- 3

Գլուխ **I**

Սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը որպես ուսուցման արդյունավետությունը ապահովող հիմքեր ---------------------------------------------------5

Գլուխ **II**

Սովորողների մոտիվացման ուղղությամբ տարվող աշխատանքները ռուսաց լեզվի դասաժամերին---------------------------------------------------9

Եզրակացություն---------------------------------------------------15

Օգտագործված գրականության ցանկ-------------------------------16

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հանրակրթական դպրոցի նպատակն է կրթության միջոցով ձևավորել ստեղծագործական մտածողությամբ անհատներ, որոնք կունենան ճկուն մտածողություն, կկարողանան լուծումներ գտնել ցանկացած իրավիճակում: Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման այս դարում ուսուցման առջև դրված են նոր մարտահրավերներ՝ սովորողներին ոչ միայն տալ գիտելիքներ, այլև ձևավորել ու զարգացնել նրանց ճանաչողական հետաքրքրությունները, ինքնուրույն և ստեղծագործական մտածողությունը, և այդ մեծագույն առաքելությունն ունեն այօրվա մանկավարժները, որոնք պետք է ընտրեն ճիշտ մեթոդաբանություն սովորողների մեջ գիտելիքի հանդեպ հետաքրքրություն առաջացնելու, ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական կարողություններ զարգացնելու նպատակով, որպեսզի նրանք դառնան ճկուն, արագ կողմնորոշվող և ձեռք բերած գիտելիքները կարողանան գործնականում կիրառել:

Դժվար է այսօրվա աշակերտների ուշադրությունը հեռախոսից տեղափոխել դասերի ուղղությամբ: Հեռախոսների միջոցով նրանց հասանելի է դառնում իրենց հետաքրքրող ցանկացած տեղեկություն, և դասին կենտրոնանալ շատ դեպքերում չեն կարողանում. «անհետաքրքիր է», «ձանձրալի», «անիմաստ»... Քերականական վարժությունների, տեքստային աշխատանքի կատարմանը մասնակցում են մի քանիսը, հատկապես այն աշակերտները, ովքեր հետաքրքրված են առարկայով կամ կրկնուսույցի մոտ են պարապում, իսկ մյուսները վերաբերվում են ի միջի այլոց՝ պատճառաբանելով, թե դա իրենց պետք չէ...: Այս ամենը ազդակ է, որպեսզի ուժեղացնենք դասավանդման մեր գործիքակազմը և մանկավարժական հմտությունների գործադրմամբ, արդյունավետ մեթոդների ընտրությամբ, ինչպես նաև ՏՏ հնարավորությունների օգտագործմամբ կարողանանք այսօրվա սովորողների մեջ հետաքրքրություն առաջացնել առարկաների նկատմամբ: Հետաքրքրվածությունը առաջացնում է մոտիվացիա, որն էլ նպաստում է ինքնուրույնության զարգացմանը, և արդյունքում անհասկանալի, անհետաքրքիր թվացող թեմաները դառնում են պարզ ու գրավիչ:

Հետազոտության օբյեկտը սովորողների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման գործընթացն է:

Հետազոտության առարկան սովորողների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը որպես ման ուղիներն ու մեթոդներն են:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել կրթական գործընթացում սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների՝ որպես ուսուցման արդյունավետությունը ապահովող հիմքերի զարգացման գործընթացը:

Հետազոտության մեջ առաջադրված վարկածն այն է, որ սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման գործընթացը կլինի արդյունավետ, եթե

- ստեղծվեն սովորողների խթանող պայմաններ,
- ուսուցիչը տիրապետի սովորողների նշված կարողությունները զարգացնելու ժամանակակից մեթոդաբանությանը,
- դասավանդման ընթացքում կիրառվեն լրացուցիչ առաջադրանքներ, որոնց կատարումը սովորողներին կմոտիվացնի և կառաջացնի հետաքրքրություն թեմայի նկատմամբ:

Հետազոտությունը կատարելիս առաջնորդվել ենք դիտման, վերլուծության, համադրման, մոդելավորման մեթոդներով:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից և եզրակացություն բաժնից: Ներկայացված է նաև օգտագործված գրականության ցանկը:

# ԳԼՈՒԽ I

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

## ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԻՄՔԵՐ

Մեր օրերում գնալով մեծանում է դպրոցի դերը ակտիվ, նախաձեռնող, ստեղծագործ մտածողությամբ օժտված անհատների դաստիարակության գործում: Հանրակրթության մասին ՀՀ օրենքում նշված է, որ կրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի` որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթության նախապատրաստմանը, և որ առաջնություն է տրվում ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանմանը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացմանը[1], ուստի այսօրվա ուսուցիչը պետք է կարողանա ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ «բացվեն» յուրաքանչյուր սովորողի հնարավորությունները, ձևավորվի նրա անհատականությունը, ինքնուրույնությունը, զարգանա ստեղծագործական միտքը: Այդ հարցում նրան օգնության են գալիս ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների (համագործակցային ուսուցում, նախագծային մեթոդ) և տեղեկատվական նոր տեխնոլոգիաների նպատակաուղղված կիրառումը:

Ուսուցիչը, բացի հիմնարար գիտելիքներ տալուց, աշակերտների ճանաչողական ակտիվությունը զարգացնելու նպատակով ձևավորում է գործնական կարողություններ՝ գործադրելով ուսուցման ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդներ[2]: Նա պետք է կարողանա արթնացնել սովորողների մեջ նոր բան սովորելու ցանկությունը, մոտիվացնել, հասնել այն բանի, որ նրանք սիրով ու հետաքրքրված կատարեն այս կամ այն առաջադրանքը, դրա համար պետք է հասկանա յուրաքանչյուր երեխայի անհատականությունը և հոգեբանական առանձնահատկությունները և ըստ այդմ գտնի սովորողների ճանաչողական մոտիվացիայի ձևավորման և զարգացման համապատասխան մեթոդներ, խթանի նրանց նախաձեռնությունը, ինքնուրույն աշխատանքը և ստեղծագործական ունակությունների զարգացումը, քանի որ ստեղծագործ մարդը կարողանում է հեշտությամբ կողմնորոշվել ցանկացած իրավիճակում, դառնում է շրջահայաց ու բազմահմուտ և ավելի շատ հաջողություններ է գրանցում իր գործունեության մեջ:

Միմյանց փոխկապակցված այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են սովորողների ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները, փոխադարձաբար լրացնում են իրար, բայց դրանք զարգացնելուց առաջ պետք է ձևավորել սովորողների անհատականությունը: Չէ՞ որ զբաղվելով ստեղծագործական գործունեությամբ՝ երեխաներն արտացոլում են արժեքների մասին իրենց պատկերացումները, անձնային հատկանիշները:

1 https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908
2 Տե՛ս Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս. Մանկավարժություն, Երևան, 2005թ., էջ 171:

Սովորողների գործունեության ամենատարբեր ձևերը, բարոյական նորմերը, ինքնագնահատականը, վարքի կամային կարգավորման տարրերը ձևավորվում են դեռևս կրտսեր դպրոցական տարիքում, հետևաբար ուսուցիչը պետք է աշխատանքներ տանի նախ և առաջ նրանց ինքնուրույնության ձևավորման ուղղությամբ:

Ինքնուրույնությունը անընդհատ զարգացող անձնային հատկանիշ է, որի հիմքերը ձևավորվում են դեռևս նախադպրոցական տարիքում: Ինքնուրույն աշխատանքները աշակերտները կատարում են ուսուցչի հանձնարարությամբ կամ սեփական նախաձեռնությամբ: Սկզբում մեծ դեր է կատարում ուսուցչի ուղղորդումը, իսկ հետո նրանք դա անում են արդեն ինքնուրույն նախաձեռնությամբ:

Սովորողների ինքնուրույնության ձևավորման հարցում շատ կարևոր է ինքնակազմակերպումն ու ինքնատիրապետումը: Սկզբում նրանց մոտ պետք է հետաքրքրություն առաջացնի  կատարելիք աշխատանքը, պատկերացում ունենան նպատակի, մեթոդների, վերջնաժամկետի մասին: Հատկապես արդյունավետ են սովորողների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները, որոնք նպաստում են նրանց ճանաչողական ակտիվության և ստեղծագործական գործունեության զարգացմանը: Ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունները զարգացնելիս ուսուցիչը միաժամանակ սովորողների մեջ ձևավորում է նախաձեռնություն, նորը բացահայտելու ձգտում, որն էլ իր հերթին մեծացնում է գիտելիքներ ձեռք բերելու մղումը[3]:

Նախաձեռնությունը  որպես անձնային բնութագիր ենթադրում է անձի անկախությունը կյանքի կարևորագույն որոշումները ընդունելիս, բարձր սոցիալական պատասխանատվության մակարդակը, ճկունությունը տարբեր իրավիճակներում, իսկ ինքնուրույնությունը համապատասխանաբար բնութագրվում է անձի հուսալիությամբ և կայունությամբ, սեփական ուժերի հանդեպ իրատեսական վստահությամբ, ինչպես նաև հարմարվողականությամբ[4]:

Յուրաքանչյուր ծնողի ցանկությունն է իր երեխային երջանիկ տեսնելը, իսկ երջանկությունը սեփական կյանքում հաջողություններ գրանցելու զգացում է, ուստի պետք է երեխաների մեջ ձևավորել այդ երջանիկ զգացումներ ունենալու կարողություններ, ոգևորել, խրախուսել նրանց, սովորեցնել փոքրիկ քայլերով հաջողություններ գրանցելու բանաձևը: Երեխաների մտքերը, գործողությունները, սովորությունները, բնավորությունը ձևավորողը հենց մեծահասակներն են, առաջին հերթին՝ ծնողներն ու ուսուցիչները: Կոգևորեն, կքաջալերեն, նրանք կդառնան ինքնավստահ, կկշտամբեն, կմեղադրեն, կունենան հակառակ պատկերը. կմարի երեխաների նախաձեռնությունը, կինջնի ինքնագնահատականը... Արդյունավետության հասնելու համար, բնականաբար, անհրաժեշտ է ծնողների և ուսուցչի վերահսկողությունը, նրանց ճիշտ ուղղորդումը: Ձևավորելով համակարգային մտածողություն՝ նրանք

---

[3] Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս. Մանկավարժություն, Երևան, 2005թ., էջ 171:

[4] Տե՛ս Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Սարգսյան Դ. Յու., Մուրադյան Ե. Բ., Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 4:

երեխաների մեջ ձևավորում են նպատակ դնելու, դժվարությունները հաղթահարելու և նպատակին հասնելու կարողություններ:

Ստեղծագործությունը մեկնաբանվում է որպես հոգևոր արժեքներ ստեղծելու մարդկային գործունեություն, նոր արտադրանքի ստեղծում կամ ստեղծագործական մտածողության արդյունք: Այն ենթադրում է անհատի մոտ այնպիսի գիտելիքների, կարողությունների և հմտությունների առկայություն, որոնց շնորհիվ է ստեղծվում այն ինքնատիպ, եզակի «արտադրանքը»: Ստեղծագործելու համար անհրաժեշտ է մոտիվացիա, որը լինում է ներքին (ձգում դեպի ինքնահիրացում) և արտաքին (տարբերվելու, ճանաչված լինելու ձգտում), իսկ այդ մոտիվացիան առաջացնելու համար ուսուցիչը պետք է տիրապետի պահանջվող մեթոդական հնարներին: Պետք է նշել, սակայն, որ ուսուցման ավանդական մեթոդները բավարար չեն ժամանակակից սերնդի ինքնուրույն մտածողությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները չօգտագործող կամ քիչ օգտագործող ուսուցիչները (հիմնականում ավագ սերնդի ուսուցիչները) դժվարությամբ են աշխատում այսօրվա աշակերտների հետ, իսկ երբ մի առարկայից աշակերտը մոտիվացված չէ, փոխվում է նրա տրամադրվածությունը նաև մյուս առարկաների հետ կապված, ուստի ուսուցիչներիցս յուրաքանչյուրը պետք է նպատակաուղղված աշխատի իր առարկան սովորողների համար հետաքրքիր ու գրավիչ դարձնելու ուղղությամբ: Ինքս, հաշվի առնելով դասարանում տարբեր տրամադրությունների առկայությունը, պատրաստում եմ մեթոդական տարբեր հնարներ (օրինակ՝ քարտային աշխատանք, իրավիճակային խնդիրներ, խմբային աշխատանք) և՛ նրանց համար, որոնք ակտիվ են ու հետաքրքրված առարկայով, և՛ նրանց համար, որոնք պասիվ են ու անտարբեր: Նպատակը մեկն է՝ դասը դարձնել հետաքրքիր, արդյունավետ և հասնել այն բանի, որ նույն պասիվ ու անտարբեր սովորողները հետաքրքրվեն առարկայով, մոտիվացվեն, զարգանա նրանց ինքնուրույն մտածողությունը:

## Գլուխ II

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Միջազգային տարատեսակ փոխհարաբերությունների իրականացման նպատակով առաջնային է եղել և մնում օտար լեզուների, մասնավորապես ռուսերենի ազատ տիրապետումն ապահովելու խնդիրը: Դպրոցում ռուսաց լեզվի ուսուցման նպատակն է  սովորողների միջմշակութային հաղորդակցության կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Ռուսերենի շնորհիվ գնալով ավելի են ընդլայնվում մարդկանց միջտնտեսական, միջքաղաքական և միջմշակութային կապերը, այն շատ դեպքերում միջնորդ լեզու է դառնում արտասահմանյան այլ լեզուներ հասկանալու համար, ուստի այն ուսուցանելու հիմնական նպատակը սովորողների՝ ռուսերենով ազատ հաղորդակցվելու կարողությունների ձևավորումն է:

Ռուսաց լեզվի ուսուցման առաջնահերթ խնդիրը բանավոր և գրավոր խոսքի՝ որպես խոսքի գործունեության երկու հիմնական ձևերի, փոխկապակցված ուսուցումն է, որն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է զարգացնի սովորողների մոտիվացիան, ինքնուրույնությունը և ստեղծագործական ունակությունները՝ ձևավորելով նրանց մեջ նախաձեռնություն, սովորելու ձգտում, նպատակասլացություն և աշխատասիրություն:

Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, ինչպիսիք են, օրինակ, համագործակցային ուսուցումը, նախագծային մեթոդը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, համացանցը օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովվում են անհատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, ընկալունակության աստիճանից, հակումներից: Ռուսերենի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, որն արդյունավետ է լինում, երբ ուսուցիչն առաջնորդվում է դասավանդման մեթոդների (պասիվ, ակտիվ, փոխներգործուն[5]) ընտրությամբ և կիրառմամբ: Փոխներգործուն վարժությունների ու առաջադրանքների էական տարբերությունը ավանդական−վերարտադրողական տեխնոլոգիայում կիրառվող առաջադրանքներից այն է, որ դրանք աշակերտները հանույքով են կատարում, ոչ միայն ամրապնդում կամ գործնականում կիրառում են ուսումնասիրած նյութը, այլ նրանց մեջ առաջանում է ինքնուրույն սովորելու, նոր նյութը ուսումնասիրելու նոր, գիտելիքն ինքնուրույն ձեռք բերելու ձգտում: Չմոռանանք, որ մեր օրերի սովորողները, կարելի է ասել, կառչած են հեռախոսներից ու համակարգիչներից, և նրանց ուշադրությունը դասի ուղղությամբ տանելը բավականին դժվար է դառնում...

Ռուսերենի դասաժամերին առաջնային նշանակութունը տրվում է նյութի բովանդակության փոխանցմանը և իմաստի վերհանմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և անծանոթ բառերի ուսուցմանը: Սովորողների միջմշակութային հաղորդակցման կարողությունների զարգացմանը նպաստում են թեմատիկ երկխոսությունները, համացանցի պաշարները, մասնավորապես աուդիոդասերի

[5] Այվազյան Հ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, «Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միություն, Երևան, 2014, էջ 24:

անցկացումը: Վերջիններս շատ հարմար են ավագ դասարանների համար, քանի որ ներառումեն լսելու, կարդալու և թարգմանելու համեմատաբար ծավալուն նյութեր:

Տարիքային տարբեր խմբերի սովորողների համար ուսուցիչը պետք է գրավիչ դարձնի իր առարկան, ձևավորի և զարգացի նրանց ստեղծագործական կարողությունները, սվորորեցնի ինքնուրույն մտածել, արտատայտվել, վերլուծել, իսկ այդ ամենը իրականացնելու համար ժամանակակից մանկավարժությունը առաջադրում է բազմատեսակ մեթոդական հնարներ, որոնցից, օրինակ, արդյունավետ են հեքիաթաթերապիան, նախագծային մեթոդը, խմբային աշխատանքը, խաղային մեթոդը:

Հեքիաթաթերապիան խնդրահարույց իրավիճակների օբյեկտիվ գնահատման, անձի ներուժի, հնարավորությունների խթանման, ինչպես նաև երեխաների էկոլոգիական կրթության և դաստիարակման գործընթաց է: Այն հեքիաթային մթնոլորտի, միջավայրի թերապիա է, որում դրսևորվում, նյութականացվում է անձի երազանքը, իսկ որ ամենակարևորն է՝ «արթնացնում է» ապահովության զգացում[6]: Բացի մի շարք այլ գործառույթներից (հեզեթերապևտիկ, հոգեշտկողական ևն), այն երեխաների ստեղծագործական գործունեությունը զարգացնելու միջոցներից է և արդյունավետ է հատկապես կրտսեր աշակերտների հետ աշխատանքում: Հեքիաթաթերապիայի հիմնական նպատակը բարոյական կողմնորոշիչների ձևավորումն է, երեխայի, պատանու կամ մեծահասակի հոգում ստեղծարար կարողությունների զարգացման խթանումը[7]: Այն սովորեցնում է հեքիաթներ ստեղծագործել, փոփոխել, շարունակել, բեմադրել և այլն: Ռուսերեն տեքստերի ուսուցման ընթացքում, հատկապես սովորողների բանավոր խոսքի զարգացման նպատակով ուսուցիչը կարող է դիմել հեքիաթաթերապիայի մեթոդին՝ սովորողներին առաջարկելով հեքիաթների, պատմությունների բովանդակության որոշակի փոփոխություններ: Այդ դեպքում շեշտը դրվում է բառապաշարի ընդլայնմանը, խոսք կառուցելու կարողությունների զարգացմանը:

Նախագծային մեթոդի իրականացման ընթացքում սովորողները ներգրավվում են կարճաժամկետ կամ երկարաժամկետ նախագծային աշխատանքներում, որոնք պահանջում են ուսումնական տարբեր առարկաներին առնչվող և իրական կյանքում հանդիպող խնդիրների համալիր լուծումներ: Այս մեթոդով աշխատելիս զարգանում են սովորողների նախաձեռնությունը, ինքնուրույնությունը, ստեղծագործական, ինքնագնահատման կարողությունները, համագործակցման հմտությունները: Իբրև նախագծային աշխատանք, օրինակ, կարելի է ընտրել հայկական հեքիաթների ցուցադրությունը՝ թարգմանված ռուսերեն կամ ռուսական հեքիաթների ցուցադրությունը՝ թարգմանված հայերեն, և ձայնային թարգմանությունը ապահովեն երեխաները: Նույնը կարելի է անել պատմական ակնարկների, նշանավոր մարդկանց, իրադարձությունների մասին նյութեր հավաքագրելու տեսանյութեր պատրաստելու առումով:

---

[6] Зинкевич-Евстигнеева Т.Д., Практикум по сказкотерапии. СПб., 2000.

[7] Ղազարյան Գ.Հ., Գալստյան Ա.Ս., Մուրադյան Ե.Բ. Հեքիաթաթերապիայի տեսություն ու պրակտիկա, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2015 թ., էջ 7:

Խմբային աշխատանքի նպատակը աշակերտների նախաձեռնողականության, մտավոր կարողությունների, թիմային աշխատանքի և թիմի հանդեպ պատասխանատվության զարգացումն է: Խմբային աշխատանքը հանձնարարելուց առաջ ուսուցիչը պետք է սովորողներին բացատրի նրա էությունը: Ռուսաց լեզվի դասաժամերին նպատակահարմար է, օրինակ, խմբային աշխատանքի հետևյալ տեսակը. դասարանը բաժանել չորս խմբի, յուրաքանչյուրին հանձնարարել գոյական, ածական, դերանուն, թվական խոսքի մասերից մեկի վերաբերյալ պատրաստել գծապատկերներ՝ ցույց տալով ռուսերենում այդ խոսքի մասերի տեսակներն ու քերականական առանձնահատկությունները: Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իր աշխատանքը մյուսներին: Այնուհետև, կիրառելով «ես-դու-մենք» հնարը, յուրաքանչյուր աշակերտի առաջարկել ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում և ընդհանուր խմբի աշխատանքի որակը իր պատկերացմամբ: Մյուս հանձնարարությունը կլինի՝ կատարել նույն աշխատանքը՝ պատրաստելով շնորհանդեսներ, և փոխհաջորդման միջոցով ստանալ ռուսերենում խոսքի մասերի վերաբերյալ շնորհանդեսների շարք:

Դասի արդյունավետությանը նպաստող ժամանակակից գործոններից է ուսուցման գործընթացում կիրառվող խաղային մեթոդը՝ իր տարատեսակ ձևերով: Մտավոր դաստիարակության զարգացման համար հատկապես արդյունավետ են դիդակտիկ խաղերը: Ռուսաց լեզվի դասաժամերին, բառապաշարը ընդլայնելու նպատակով, օրինակ, կարելի է կիրառել «Ով ավելի շատ» խաղը (նպատակը՝ հարստացնել սովորողների բառապաշարը, ինքնուրույնությունը, խմբում աշխատելու կարողությունները), «Փոստատարը նամակ բերեց» (նպատակը՝ հարստացնել սովորողների բառապաշարը, ռուսերենով ինքնուրույն խոսք կառուցելու կարողությունը, երևակայությունն ու ստեղծագործական մտածողությունը), «Ինչ կլինի, եթե հանկարծ...» (նպատակը՝ զարգացնել սովորողների ստեղծագործական ընդունակությունները)[8] և այլն:

Մտավոր և ստեղծագործական կարողությունները զարգացնելու նպատակով բոլոր դասերին էլ ցանկալի է կազմակերպել խաղային պահեր՝ գտնել տարբերությունները, շարունակել օրինաչափությունը, չորրորդ լրացուցիչը, ռեբուսներ, հանելուկներ, խաչբառեր և այլն: Արդյունավետ են նաև արտադասարանային աշխատանքները (էքսկուրսիաներ, միջոցառումներ, վիկտորինաներ, օլիմպիադաներ), որոնց շնորհիվ ձևավորվում և զարգանում են նաև սովորողների միջանձնային հարաբերությունները, ճանաչողության սահմանները:

---

[8] https://innostud.am/application/library/bc35e16d.pdf, Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երևան, 2009, էջ 50:

Նշեմ, որ սովորողները մեծ հաճույքով են մասնակցում խմբային աշխատանքների, որոնք տարբեր դասերի համար տարբեր եմ ընտրում, որպեսզի նրանց ոգևորությունը չմարի և խթան հանդիսանա ինքնուրույնության, ստեղծագործական կարողությունների ու նախաձեռնության զարգացման համար:
Օրինակ՝ 9-րդ դասարանում ,,Уроки французского,'' թեման անցնելիս կազմակերպել եմ խմբային աշխատանք, որի նպատակն էր սովորողների մեջ արթնացնել ընթերցասիրություն, ռուսերեն տեքստը կարդալու, ինքնուրույն թարգմանելու ձգտում, զարգացնել ռուսերենով հարցեր և պատասխաններ ձևակերպելու կարդացածը մեկնաբանելու կարողություններ:
Պարտադիր պայման էր տրված հատվածը նախապես ուշադիր կարդալը:
Խմբային աշխատանքը կոչվում էր «Դատարկ աթոռ»: Նախապես ընտրել էի տեքստի բովանդակության վերաբերյալ 2 պնդում՝ մեկը ճիշտ և մյուսը սխալ: Աթոռները դասավորել էի շրջանաձև, և յուրաքանչյուր աթոռի վրա դրել էի մեկական պնդում: Աշակերտները հերթով մոտենում էին աթոռներին, ծանոթանում պնդումներին, այնուհետև յուրաքանչյուրը ընտրում էր այն աթոռը, որի վրա դրված պնդմանը համամիտ էր, և ըստ այդմ ձևավորվեց 2 խումբ: Ամեն մի խմբի տվել էի 15 րոպե ժամանակ՝ քննարկելու տվյալ պնդման վերաբերյալ նյութը և հայտնելու սեփական կարծիքը՝ պատասխանը հիմնավորելով բնագրային մեջբերումներով: Ժամանակը լրանալուն պես խմբերի ներկայացուցիչները հերթով մոտենում էին մեջտեղում դրված դատարկ աթոռին՝ հայտնելու խմբի կարծիքը պնդման վերաբերյալ, և սկսվում էր քննարկումը:
Աշխատանքը բավականին ոգևորեց, ակտիվացրեց անգամ պասիվ աշակերտներին:
Դասի ավարտից 10 րոպե առաջ ամփոփեցինք խաղի արդյունքները: Երկու խմբերն էլ խրախուսվեցին, հաղթող ճանաչվեց այն խումբը, որն ընտրել էր ճիշտ պնդումները և կարողացավ հիմնավորել իր ընտրությունը:
Աշակերտների կողմից սիրված խմբային խաղերից է «Տուրիստական գործակալությունը», որը արդյունավետ է սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման, ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով: Սովորողներին բաժանում եմ 2 խմբերի, մի խմբում տուրիստական գործակալության օպերատորներն են, մյուսում՝ տուրիստները: Խմբերը ստանում են որևէ երկրի գովազդային թերթիկը, նրանց տրվում է 15 րոպե ժամանակ համացանցից անհրաժեշտ տեղեկություն ձեռք բերելու համար, և սկսվում է

ռուսերենով երկխոսությունը: Տուրիստական գործակալության օպերատորները պետք է կարողանան գրավիչ կերպով ներկայացնել տրված երկիրը, իսկ տուրիստները՝ հնարավորինս շատ հարցեր տալ՝ այդ երկիրն ընտրելուց առաջ: Հետևում եմ նրանց խոսքի կառուցմանը, հարցադրումներին, ծավալվող երկխոսությանը: Խրախուսվում են երկու խմբերն էլ, հաղթող է ճանաչվում այն խումբը, որը ավելի լավ է կատարում իր գործառույթը՝ տրամաբանված, համոզիչ խոսք, ճիշտ ձևակերպված հարցեր…:

Ուսուցիչը, անկախ այն բանից, թե որ առարկան է դասավանդում, պետք է շարունակական աշխատանքներ տանի ինքնազարգացման ու առաջընթացի ուղղությամբ, հաղորդակից լինի դասավանդման նորագույն արդյունավետ մեթոդներին ու հնարներին և ամենակարևորը՝ սիրով կատարի մանկավարժի իր չափազանց պատասխանատու աշխատանքը՝ կրթելով ու դաստիարակելով առողջ դատողությամբ, ստեղծագործական մտածողությամբ, բարձր արժեհամակարգով անհատներ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով դպրոցում սովորողների ինքնուրույնության, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ անդրադարձանք այդ նաև սովորողների մոտիվացման աշխատանքներին ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում:

Ամփոփելով մեկ կողմից կատարված ուսումնասիրությունը՝ եկանք այն եզրահանգման, սովորողների ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար որ այսօրվա ուսուցիչը պետք է զինված լինի և մասնագիտական, և մեթոդական անհրաժեշտ հմտություններով, տիրապետի դասավանդման ժամանակակից մեթոդաբանությանը, քանի որ ավանդական մոտեցումներով մերօրյա սերնդին հետաքրքրել և մոտիվացնել հնարավոր չէ: Նա պետք է պատրաստ լինի դասավանդման

ընթացքում կիրառելու նաև այնպիսի լրացուցիչ առաջադրանքներ, որոնց կատարումը սովորողներին կմոտիվացնի և կառաջացնի հետաքրքրություն թեմայի նկատմամբ, և դասի ավարտին նրանք տուն գնան նոր բան սովորած և տանը նոր հետաքրքիր առաջադրանքներ կատարելու մղումով: Այսօրվա երեխաների անբաժան ուղեկիցները դարձած հեռախոսների ու համակարգիչների հնարավորություններն անգամ ուսուցիչը պետք է օգտագործի դարձյալ ուսուցողական նպատակներն իրականացնելիս. Չէ՞ որ նրանք մեկ մատնազարկով կարող են ձեռք բերել հետաքրքիր տեղեկություն, թարգմանել, բանավոր վերլուծել…

Դասավանդումն ինքնին ստեղծագործական գործընթաց է, այն պահանջում է բազմահմուտ անկավարժների անմնացորդ նվիրում, նպատակաուղղված ջանքեր և անհատական մոտեցում, որոնց արդյունքում միայն հնարավոր կլինի ձևավորել ինքնուրույն, նախաձեռնող, ստեղծագործական կարողություններով, մարդասիրական և հայրենասիրական բարձր արժեքներով օժտված անհատներ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս. Մանկավարժություն, Երևան, 2005թ.:
2. Ղազարյան Գ.Հ., Գալստյան Ա.Ս., Մուրադյան Ե.Բ. Հեքիաթաթերապիայի տեսություն ու պրակտիկա, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2015 թ., 84 էջ:
3. Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Սարգսյան Դ. Յու., Մուրադյան Ե. Բ. Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում, Երևան, 2017թ., 78 էջ:
4. Պետրովսկի Ա. Վ./խմբ./, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, 1977թ.:
5. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf ,Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020թ., 76 էջ:
6. https://innostud.am/application/library/bc35e16d.pdf, Զուլհետա Գյուլամիրյան, Խաղալով սովորենք, Երևան, 2009թ., 80 էջ:
7. https://iyazyki.prosv.ru/2016/06/progress-creativity/